



ՕՐԱԳԻՐ ՁՄԻՒՌՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏՆՄՈՒԹԻՒՆ

ՁՄԻՒՌՆԻԱ ԸԱԲԱԾ 29 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1866

ԹԻՒ 791

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏՆՄՈՒԹԻՒՆ

ՁՄԻՒՌՆԻԱ 29 ՀՈԿՏԵՄԲԵՐ

Ինչպէս յայտնի է, յաբուժան կայանը անձնական ակարութիւնը մեծ հոգ և անձկութիւն պատճառած էր բոլոր աշխարհի . սակայն օրըստօրէ «Երբն Վեհա- փառութեան առողջութիւնը բարեբերով» հասարա- կութեան անձկութիւնը և կասկածը փարատեցան . Գաղղիացի կայանը Պիարիցէն վերադարձաւ . ի փարիզ շատ առողջ կենօք ու 1-2 անգամ օրսի ե- լաւ Վեհապաշտ անտառաց մէջ :

Գաղղիոյ քաղաքականութիւնը կաշնատի միշտ հաստատուն պահել Լեւոպիոյ խաղաղութիւնը . և տարակոյս չկայ թէ պիտի յաջողի . վասնոր ըստ այսմ մասին համաձայն է Սեօնի Բրիտանիոյ կառա- վարութեանը հետ . Լայս երկու հօր տէրութիւն- ները մօտեցնող բարեպաշտ հոգի ունեցան նորէն յայտնելու, թէ իրենց ընթացքը նպատակաւոր պիտի ըլլայ միշտ Բուրբուստանի . որուն ամբողջութիւնը և յառաջագիծութիւնը ամենահարկաւոր է Լեւոպիոյ հաւասարակշիւութիւնը անփաստ պահելու համար :

Յայտնի է որ յաբուժան կայանը որոշեց ֆիզի- քաբար կոչուած նորահայտ ամենապատուական հը- րացանը ընդունել իւր զօրաբանակին գործածութե- ղ համար . Լայս հրացաններէն, ըստ աստիճանի Լօրօք լրագրոյն, Գաղղիոյ կառավարութիւնը մէկ միլիոն 600,000 հատ ապսպրեք է, որոց արժեքը՝ ընդ ա- մենայն, 112 միլիոն ֆրանքի պիտի հասնի :

Փարիզի Բաթրի օրագիրը կըսէ, թէ Բարձրագոյն Գիտութեան շնորհակալ եղաւ Գաղղիոյ կառավարութեան իւր բարոյական գործակցութեանը համար զոր մա- տոյց օսմանեան տէրութեանը Վիրիտի ապստամբու- թենէ ետեւ, կրկնելով իւր խոստումը թէ, կարելի եղածին չափ, ներողամտութեամբ և մարդասիրու- թեամբ պիտի վարուի կրէտացիոց հետ :

Թէպէտեւ ձայն մի տարածուեցաւ, թէ Բուրբուստան սկսաւ բանախօսութիւններ ընել Ռուսաց կառավա-

րութեանը հետ ի մասին Լեւեռեան խնդրոյն, սակայն Պիարիցի պաշտօնական օրագիրը կըսէ թէ այս լուրը բոլորովին անհիմն է :

Գաղղիացի զօրքը, 1864 Սեպտեմբերի 3-15ին եղած դաշնադրութեան համեմատ, առաջիկայ Գեկ- տեմբերի առջի օրերը անպատճառ պիտի մեկնին Հոռմէն : Կես աշնորիկ սուրբ Գահին բաղդը Վե- թոր-Լամանուէլ թաղաւորին ձեռքը պիտի մնայ և Պիարիցի պաշտպանութիւնը պիտի յանձնուի «Վե- հափառութեան բարեպաշտութեանը և արդարասի- բութեանը» Գաղղիան՝ իրեն երէց որդի Եկեղեց- յոյն, իւր պարտաւորութիւնները կատարեց . և յետ այսորիկ Խաւիոյ կըվերաբերի իւր իրաւունքը և իւր պարտքը ի գործ դնել՝ հոգ տանելով Հոռմի ներքին և արտաքին ապահովութեանը վերայ :

Գաղղիացի լրագիր մի այս խորհրդածութիւնը ը- նելէ ետեւ, կըցաւ որ «Երբուժան կայանը կառա- վարութիւնը չկայտնէր իւր ապառնի ընթացքը» եթէ հոռմէական օտար տէրութիւն մի, ո՞ր Գահը թշնա- մանքէ ազատ պահելու պատճառաւ, զօրաբանակ մի յուղարկէ ի պաշտպանութիւն Հոռմի : Սեպտեմ- բերի դաշնադրութեան մէջ յայտնի կերպիւ նշա- նակուած չէ լայս դիպուածական եղելութիւնը : Ուստի իւրաքանչիւրք ինքնիքեն կըհարցնէ թէ, այսպիսի դիպուածի մը մէջ յիշեալ դաշնադրութե- ստորագրող տէրութիւնները, այսինքն Գաղղիան և Խաւիան, ի՞նչ ընթացք պիտի բռնեն : Թէպէտեւ Գաղղիոյ կառավարութեան ի՞նչ ընելիքը չեմք գի- տեր, բայց յայտնի է որ Խաւիան պիտի փութայ բաղմամբ զօրք յուղարկել ի Հոռմ՝ օտար տէրու- թեան մը զինուորները յիշեալ մայրաքաղաքը մըտ- նելէ յառաջ : Խաւիան չկրնար սուրբ Գահին պաշտպանութեան իրաւունքը ո՞ր և է հոռմէական տէրութեան մը թոյլ տալ, այն ինչ Գաղղիան կը- հրաժարի այս իրաւունքէն . հետեւաբար օտար տե- րութեան մի զօրք յուղարկել ի Հոռմ՝ Խաւիոյ դէմ պատերազմի հրատարակութիւն մի պիտի համա- բուի ի կողմանէ Դիօրէնիայի գահէին :

Լրագիրները այս ապառնի դէպքերուն վրայօք զբաղեալ են . վասնոր կըհաստատեն թէ Սպանիոյ թաղուհին որոշած է սրբալան Պիարիցի պաշտպանու- թիւնը իւր վերայ առնուլ և բաղմամբ զօրք յու- ղարկել ի Հոռմ, գաղղիացի զինուորները անկէց մեկնելէ ետեւ :

Երկայ ամսոյս 7-19ին Լըպեօ գաղղիացի զօ- ղապետը պաշտօնական կերպիւ յանձնեց զՎեհապա- կը քաղաքապետական իշխանութեանը (միւնիսթրալի- թէ), որ փութացաւ իտալացի Սեօնի զօրապետին յանձնելու զայն : Կայնժամ իտալական եռագոյն գրօշակը քաղուեցաւ սուրբ Սարկիսի հրապարակը և թնդանթի 101 արձակմամբ ողջունեցաւ ի մեծ ուրախութիւն սրտի բոլոր ժողովուրդեան . որ կեցցէ՝ Խաւիան, կեցցէ՝ Վեթոր-Լամանուէլ թաղաւորը կաղաղակէր շարունակ . Վերապաժնի թէ շատ կանայք և ծերունիք փողոցներուն մէջ ծունկ չոքելով ջեր- մանադուլութեամբ դահուլիւն կըմատուցանէին Լա- տուժոյ, որ արժանի ըրաւ զինքնք այս փառաւոր օրը տեսնելու :

Լամսոյ 10-22ին ընդհանուր քուէարկութիւնը սկսաւ ի գործ դրուել բոլոր Վեհապետի նահան- գին մէջ, և առջի օրը՝ Վեհապետի քաղքին 30,000 քուէարկուներէն զրեթէ 25,000ը փութացան քուէ- տալու և ամենքն այս կըսէին . այսինքն միաւորու- թիւն կուղեմք Խաւիոյ հետ : Սուր օրերս Վեթ- թոր-Լամանուէլ թաղաւորը կըպատուի ի Վեհա- տիկ, ուր մեծամեծ պատրաստութիւններ կըտեսնուի արժանաւոր պատուով ընդունելու համար զՍարիսի Վեհափառութիւնը :

Խաւիոյ թաղաւորը, որ այժմ Գուրինօ կըըլտ- նուի, հաշտութեան դաշնադրութիւնը վաւերանալէ ի վեր ամեն օր շնորհաւորական նամակներ կըն- դունի Լեւոպիոյ վեհապետներէն . Գաղղիացիոց կայսրը, Բրուսիոյ թաղաւորը, Պեճիկացիոց թա- ղաւորը և Լեւոպիոյ թաղուհին փութացան, այս բա- րեպաշտ հոգի, իրենց համակրութեան ապացոյց- ները յայտնելով Վեթոր-Լամանուէլ թաղաւորին :

ԻՆՉՊԵՏԱՆԻ ԴՆԵՆԵՐ

Ինչպէս Աշխարհայ նախընթաց բուռն մեծ ծանուց- րուած է, ամառասիկ Ատրպատականի Հայոց առաջ- նորդ գերապատիւ տէր Պեհրգ արքեպիսկոպոսին խնդրագիրներուն օրինակները, նմանապէս Պարսից վեհափառ Դաշին նոյն խնդրոց գործադրութեան հա- մար շնորհած հրովարտակներուն բարգմանութիւնը :

ԽՆԴԻՐ

ՁԵՐԴ ԱՐԵՎԱԿԱՆԱՓԱՅԼ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ

Ամենողորմած արքայ ընդհանուր Պարսկաստանի .

Բացերեւակի յայտնի եղին մեզ վսեմափայլ արքայիչ հոգեկան ըզձիւ հաճութիւն, զի հպատակք քրիստոնեայ ազանց՝ որք ենն ընդ հզոր պաշտպանութեամբ Ձերդ արքայական բարձրութեան, միշտ զխաղաղ և զանգը- ղով ունիցին զառապարկ ինչպաղաքութեան և անձ- նական կառավարութեան ի քաղաքս և ի զլեւորայս սահմանացն Ատրպատականի . որոյ զփորձ առաք մեր ի ժամանակս ծառայելոյ միւր մերազն ժողովրդականաց խրախան և ընկի Հայոց ի միջոյն հնգից ամաց . այլ զի հոգեւանդ փառաբանմա՜ր սեպուհ պարտաւորութիւն ան- ձինս համարեցայ անձամբ անձին ներկայանալ առ Ս- թոռ մեծի արքայիչ և մատուցանել զխաղաղութն գոհու- նակութիւն ի զինաց աղբին խում, և իմ իսկ զխաղաղ և աղբիւն զստուածաղոր արքայիչ յաղաքս քանի մի կարեւոր դատեցեալ խնդրուածոց վասն առաւելադոյն ապահովելոյ զվիճակ ինձ յանձն եղեալ փորրիկ հօգին Հայոց, և բարեւը կառավարութեան վանօրէից և եկե-

ղեցեաց, զորս ամենազպատակօրէն ընդ ամին արկանեմ առաջի աթոռոյ մեծի և հզոր արքայիչ ի տնօրինու- թիւն՝ հանդերձ արդասեօք երկամեայ վաստակոց աշու- կիրտացն և օրիորդաց աղբային զպրաքսան թարգմիղու- քաղաքի կառուցելոյ յանուն Ձերդ տէրութեան :

Վասն բազմամեայ կենաց արքայական մեծութեան ձերոյ

Չեւ մահաւ աղթարար

Գեորգ արքեպիսկոպոս Վեհապետեան

1865 Օգոստոս 4

Առաջնորդ Հայոց

Ի Թէհրան

Արքապատականի

ԽՆԴԻՐ ԱՌԱՋԻՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ

Առաջին . — Նորոգել զբոլորատակ Ձերդ արքայա- կան բարձրութեան շնորհալար ի վաղուց յաղաքս այնու- ցիկ անձանց Հայոց, որք յետ ընդունելոյ զկրօն Մահ- մէտի, առանց յայտնի պատճառաւանց չունիցին բնաւ իրաւունս յարուցանել վեճ ինչ ընդ մերձաւոր աղբա- կանս իւրեանց առ ի կորդել զժառանգութիւն տոհմա- կանաց իւրոց, զրկելով զայնս բռնաբար և կաշառք, որք մնան ի հոյրենի դաւանութեան իւրեանց :

Երկրորդ . — Բարեհաճեցի ձերդ արքայական բարձ- րութիւն շնորհել ի նորոգ զառանձին հրովարտակ, զի եթէ որ ի Հայ հարստական ձերոց, որպիսի և իցէ պատ- ճառաբերութեամբ կամ վասն հարստահարելոյ զաղբա- կիցս և զընտանիս իւր, կամ ի պատճառս շահախորու- թեան անձին, և կամ վասն սիրահարութեան ընդ ու- մեր՝ զիմեաց առ կրօն խաղաղ, մի լիցի թողլորութիւն այնպիսեղոյն առանց ծանօթութեան և վերահասութեան առաջնորդացն Հայոց. Արքապատականի՝ զարձուցանել ի հայրենի և յուղղափառ հաւատոյ առ կրօն Մահմէտի,

եթէ ոչ քննեցի նախապէս առաջի զլիսաւորաց հոգեւո- րականաց երկուց կողմանց . և այնպիսին հերքեցի ի ժողովոյն, եթէ չունիցի օրինաւոր պատճառս :

ՆՈՐԻՆ ՊԱՏԱՍԻՆ

Հրովարտակ արքունի կնքով առ Վեթի լսան Սարտարն- Ենորհօք առաջատարութ մեծամեծար զթութեանց ա- մենողորմած և օգոստափառ քաղաւորին կայսր՝ բարձ- րացի մեծաւ աստեղափայլ փառք ինքնախոհ և հաւա- տարիմ ծառայն միւր աղբի լսան : Գիտելի է, զի ըստ կանոնի ամենասուրբ օրինացն մեր՝ որպէս յառաջագոյն անօրինեալ եմք, որք ի Հայոց փոփոխողաց և աշխարհաց զհաւատս բնածին ի կողմն այնպիսեղոյն ի հաւատս սրբութեան փառացն խաղաղ թէպէտ ոչ գոյ առ այս խորոց ինչ և արդեւտիկ խախտումն ինչ այսր սրբա- զան զթրծոյ որ ի փոփոխումն հաւատոյ, իւրաքանչիւր ազատ է և բացարձակ կարէ ընդունել զկրօն խաղաղու- թեան . բայց հարկ է ճանաչել և իմանալ զի ոմանք ի պատճառս թշնամութեանց և շարամոթութեանց աշխար- հական կրից՝ և ո՞չ ի ժառանգել զբարիս երանութեան հանդերձեալ կենաց, յայտնի միջոցք և զօրաւոր առիթք իւրեանց արարեալ այնպիսի անձինք, և կամին տառա- պեցուցանել զընտանիս և զմերձաւորս իւրեանց յախը- տալելով զիրս և զհարստութիւնս նոցա միանգամայն յանձն իւրոց սեփականել . վասնորոյ այսպիսի գործք մեծի քննութեան և մանրամասն ծանօթութեանց ար- ժանի դատին . սակաւքն յայնմ հրամանի՝ զոր պարտ և պատշաճն է՝ սովին մեծաւ հրամանաւ վտերսոյրոյցա- նեմք, որ ի հոյրեալանց և այլոց աղբաց բնակեցոյ յԱ- տրապատական աշխարհի հաճեցի յօժարութեամբ դառ- նալ ի հաւատոյ իւրից առ սրբալոսն և հաստատուն կրօն

Տանիմարքի թաղապետին դուռնը բարձրադասի
Տաղմար իշխանուհին, որ բողոքական էր, հոգևոր-
բերի։ Ունի Ալեքսանդր օրթոդոքս կրօնը ընդունե-
ցաւ Բէդէրդուրի մէջ, և հետեւեալ օրը անոր
նշանուէրի հանդէսը կատարուեցաւ Ռուսիոյ թա-
ղապետանոց իշխանին հետ։ Այս հանդէսը մեծ փա-
ռաւորութեամբ եղաւ ի ներկայութեան արքունեաց
և տէրութեան զինաւոր պաշտօնատարաց։ Այդ օրը
Տաղմար իշխանուհին կայսերական հրովարտական
Ռուսիոյ արքայազնուհի անուանեցաւ։ Ամուսնութեան
հանդէսը կըսուի թէ ամսոյն 28ին պիտի կատարուի։
Բարձրադասի Վալէնտին իշխանը, որ Տաղմար
իշխանուհւոյն քեռայն է, այս օրերս կըսպասուի
ի Բէդէրդուրի, որպէսզի ներկայ գտնուի անոր
հարսանեաց հանդիսին։

Անգղիական և Արևելեան օրթոդոքս եկեղեցեաց
մէջ համաձայնութիւն և միաւորութիւն մի հաստա-
տելու ձայն մի տարածուած է բաւական ժամանակէ
ի վեր։ Այս ձայնը կերելի թէ անհիմն չէ։ Ինչու
որ արդէն յայտնի է, թէ յիշեալ միաւորութիւնը
յասաւ իրենց համար՝ մեծ ընկերութիւն մի հաս-
տատուած է ի Ռոմոն, որուն անդամ եղած են
անգղիական եկեղեցւոյն զինաւոր պաշտօնատարները և
շատ աշխարհական բարեպաշտ և երեւելի անձինք։

Արժանայարգ միստր Ջորճ Ուիլիամ անգղիացի
քահանայն, որ յիշեալ ընկերութեան ուսման մարմնի
թաղապետական ճեմարանին անդամ է, անցեալ շաբ-
թու իւր մի հասաւ Աստիքէն գաղութ, և փութացաւ
այցելութեան երթալու գերապատիւ տէր Սրիսան-
թոն Զոնայ։ Մետրապօլիտին և անոր սուրբ օրհ-
նութիւնը խնդրեց։

Այս գիտնական քարոզիչ քահանայն զանազան
նամակներ ներկայացոյց նորին գերապատիւութեանը՝
որոնք Անգղիոյ արքայական պալատին և եպիսկոպոս-
ներէն մագաղաթի վերայ անգղիերէն գրուած են և
ուղղեալ Արևելեան պատրիարքայ, Սետրապօլիտայ
և եպիսկոպոսայ։ Այս նամակները լի են քրիստո-
նէական և եղբայրսիրական զոյգմանց յայտարա-
րութեամբ և ջերմանոց բարեմաղթութիւններով
վասն միաւորութեան եկեղեցեաց։

Զոնայ Սետրապօլիտ բազում սիրով և յարգա-
նօք ընդունեցաւ զգիտնական և զարժանայարգ ե-
րէցը, և ի պատասխանի վասն միութեան հաւատոյ
բարեմաղթութեանց զորս կըպարունակեն անգղիա-
կան եկեղեցւոյն երկցապետաց յիշեալ նամակները,
նորին գերապատիւութիւնը ըսաւ թէ, Արևելեան
օրթոդոքս եկեղեցին՝ իւր հաւատադրօքայ մաղթա-
նաց մէջ՝ աշխարհին խաղաղութիւնը և հաւատոյ մի-

ութիւնը կը բնութագրուի։ Աստուծոյ։ Արեւելցիներով թէ
հոգեւոր խաղաղութեան և սիրոյ մէջ հաղորդակցու-
թիւնը և եկեղեցւոյն հովիւներուն քրիստոնէա-
վայել գիշումը կանան գործակից և օգնական ըլլալ
այս նուիրական փափաքանց՝ զոր խրաբանչիւր բա-
րեպաշտ քրիստոնէայ պէտք է որ ունենայ։

Կը հաստատեն թէ մտ օրերս Ռոմոնի մէջ անգ-
ղիերէն և յունարէն ընդունալ խմբակներ օրացիր
մի պիտի հրատարակուի, որուն նպատակը պիտի
ըլլայ՝ եկեղեցեաց միաւորութեանը համախոհ և
կուսակից անձանց թիւը աւելցնելով՝ ջանալ յաջող
վախճան մի տալու այս ձեռնարկութեանը։

Մեծարգոյ միստր Ջորճ Ուիլիամ քահանայն, որ
Թուրքաստանի և Հէլլատոյի շատ քաղաքացի այցե-
լութիւնը ըրած էր, իւրիւրէն ճամբայ ելաւ՝ ուղղակի
Ռոմոն վերադառնալու։

Յուպպիկն հետեւեալ լուրերը կուտան, որ հետա-
քրքրական եւ ուղարկութեամբ արժանի են, եւ որոց
վրայօք լրագրոյն միջոցաւ քոչոյց մեջ համառօտ
յիշատակութիւն մի քրտն են։

«Անցեալ Սեպտեմբերի 10ին ամերիկացի մեծ
նաւ մի հասաւ մեր նաւահանգիստը։ Այս նաւուն
մէջ 25 ամերիկացի գերդաստաններ կային, բազ-
կացեալ 156 հոգիէ, որոնք Աւետիք այս երկիրը
կուզան զաղթականութիւն մի հաստատելու համար։
Յիշեալ գերդաստանները հետեւին բերած են ի-
րենց ամեն տեսակ ընտանեկան կահաւարքեր, մեծ
և ուղղակի կառք, և երկրագործութեան վերաբեր-
եալ զանազան արհեստական գործիք։ Ասոնց նպա-
տակն է առայժմ իրենց բնակութիւնը Զոպպիի ար-
դաստար գաղտնիք մէջ հաստատել ու երկիրը
մշակելով իրենց ապրուստը ձգել։ Այս գաղթա-
կանաց ետեւէն բազմաթիւ ընտանիք ևս պատրաստ
ուած են, կըսեն, որոնք նոր աշխարհէն հին աշ-
խարհը փոխադրուելով՝ պիտի գան սուրբ Երուսա-
ղէմ և անոր շրջակաները բնակելու, ուր նորահար
պատուական գործիքներով երկիրը պիտի մշակեն և
երկրագործութիւնը պիտի զարգացնեն։

Զոպպիի բնակիչները առաւօտէն մինչև երեկոյ
ծովէն դէպք կը ժողովուրդ տեսնէ իւր համար ամերիկացի
գաղթականները՝ որոնք պատրաստուած տախտակներ
իրենց նաւէն (1) հանելով կանոնաւոր կերպիւ բնա-

(1) Կը հաստատենք քիւսայ մեծ հաւք յիշեալ գաղ-
թականութեան ստացուածքն է եւ կանոնաւոր եր-
բեմեքութիւն պիտի ընէ միշտ ի մէջ Յուպպիի եւ Ս-
մերիկայի՝ գաղթականաց գանազան հարկաւորու-
թեանցը համար։

Մահմէտի, վերաբնութիւն անձնական վիճակի և գոր-
ծոյն հանգամանայ նորա արժանէ ստանց ձեռնառու-
ութեան որոց և ինչ խնամայ յայտնաբեր գործս թողու-
միայն վերահասութեան օրինականացն երեւելի գիտնա-
կանաց հոգեւորականաց և աստուածաբանից երկաթան-
չիւր կողմանց, և զկարելի և զարժանին ի վեր երեւեալ
գործս վճռահատել, որով ճանաչեցել թէ հաւատաւոր
անձն այն յինքն բերելը՝ զհաւատ ճամբարին Մահմէտի-
ն և զոր ինչ արժանի վճիռ եղցի ի գործս այնպիսի այն-
քան ի գործ գիշիւր և եթէ հակառակ ինչ կամք
նորա՝ յայտնեցել բարձրագոյն օրինականացն չարա-
կամութիւն նորա, ապա ուրիմն ի բաց հերքեցել և
մերժեցել իսպառ այն։ յայտնելի գործս գիշիւն ջեր-
մանաւորութեան և աշխատութեան ճիգն ի գործ գիշիւր
և պարտապան կայտնելը զանձն ձեր։ Հրամայեցաւ ի
Բէճէպ ամիս 1282 ամի։

ԽՆԴԻՐ ԵՐՐՈՐԴ

Երրորդ. — Բարձրագոյն հրամանաւ և արքայական
բովարտական հրատարակեցել, զի Ամերիկացի միսիո-
նար քարոզիչք և զբաղմանք միանգամայն անհետա-
լին ի Պարսկաստանէ ի քաղաքացի և ի գիւղերէն, որք
յորդորանօք և զբամական օժանդակութեամբ բազում
խռովութեանց և երկպառակութեանց լինին առիթ և
ցանկն որոմն ի մէջ ժողովրդականաց Հայոց, և խան-
դարեն պարտականութիւն տեղական հասարակութեան
Հայոց անգամ և ճանկայ։

ՆՈՐԻՆ ՊԱՏԱՍԻՍԱՆ

Սոսանին հրովարտակ արքունի կնքով։

Պերճապատէ Սղիշ Խան հաւատարիմ մեր արքայ։

տիւն տիւնոց, պատուիրամբ մեծաւ յանձն տանելը
հեծարու տիրակալ իշխանութեանդ հարկ համարիւ ձեռ-
ք և ըստ արքունի հրամանի մերոյ, ոչ ներկընաւ և ոչ
թուղարիւ ի քաղաքս և ի գիւղերս յայտնաբերու-
բնակել որպիսի և ինչ անձն ի քարոզչաց կամ ի գրա-
վաճառաց, որք ունին ի հերոսն հետէ պրնակութիւն ի
սահմանին Ռուսիոյ յայտն ամերիկացեաց անգղիացեաց,
որք խանդարեալ զարգել բարոյականութիւն սղաղա-
ւան ազգաց քրիստոնէից և իտալականութեանց մերոց հպա-
տակաց, որպէս և վաղցոյ կարգադրեալ տնօրինակելով,
անշուշտ պարտ անձին համարելը ի կատար անելով
զմիտս արքունական հրամանին։

Գրեցաւ յամենան Բէճէպ 1282 ամի

կամ Նոյեմբերի 1865 թիւ։

ԽՆԴԻՐ ԶՈՐՐՈՐԴ

Զորրորդ. — Բարձրագոյն հրաման լիցի և բարեհաճ
հրովարտակ արքայական զի հայք բնակեալք յԱրարտ-
տական սահմանին Պարսիոյ՝ մի ծանրաբեռնեցելն այլե-
այլ հարկատուութեամբ ի ձեռաց կողմնաւորեալ և ի ի-
րողացն կարգելը ի գիւղանէն, որք բուն պահանջին
զաւելորդ մշակն, զիպատս վառելի, զրաժս վասն հար-
սանեաց, և առաւել քան զհալին հարստաւորեն զմեզ
կիւս ամենայն մասամբ։ Այլ բաւականացելն այնու մի-
այն՝ զոր հաստատուն պահէ ի մատենա գիւղացի և
ի քիթախայն, զոր բարձրագոյն հրամանաւ ձերք մե-
ծութեան ընկալեալ է լրիւ դասման և զեղանակ չափու-

ՆՈՐԻՆ ՊԱՏԱՍԻՍԱՆ

Հրաման նորին գերապատուութեան վիճադօր վե-
գիրի եւ Սպասալարի առ Սղիշ Խան ընդհանուր

կարանին շինեցին ծովեզերքը, որուն մէջ կըլի-
զեն այժմ իրենց զանազան հանգերձանքը։

«Այս գաղթականաց հետ կըգտնուին 2 բժիշկ, 1
քահանայ, և 1 եպիսկոպոս, և միտք ունին ծա-
խու առնուլ ընդարձակ գետին մի և այնտեղ հաս-
տատել իրենց մշտնջենաւոր գաղթականութիւնը։

«Բարձրադաս ժողովուրդը ուրախութեամբ ընդունե-
ցաւ այս գաղթականները, և կըլուսայ թէ անոնց
միջոցաւ քաղաքակրթութիւնը և աշխատասիրութիւնը
պիտի տարածուի այս կողմերը։ Վանդի քիչ զար-
մանալի չէ այս տեղի բնակչաց համար՝ տեսնել
գիւղացի և երկրագործ գերդաստաններ։ Որոնք
բարեկրթութեան, զարգացման և լուսաւորութեան
ամեն ապացոյցները վրանին ունին, պատուական ա-
ռաւելութիւններ՝ որոնք անձանթ են հասարակու-
թեան կողմանց։

Յիշեալ գաղթականները հետեւին բերած են
նաւ եղբ (էօբիւ) ի պէտս երկրագործութեան։
Իսկ բերուած կառքերը, զորս վերը յիշեցինք,
պատճառ կուտան շատերուն յոստալու, թէ քիչ
ժամանակուան մէջ կառաւարդ ճանապարհ մի ևս
պիտի շինուի Զոպպէն մինչև Երուսաղէմ, որուն
հարկաւորութիւնը շատոնցմէ զգալի եղած է թէ օ-
տարականօք և թէ տեղացեաց։

Կոստանդնուպօլիսէն կըլիւն։

Մոլտովալարայի տիրոջ բարձրադասի Կարոլոս
իշխանը հոգ. Իջին հասաւ ի մայրաքաղաքս Իզէա-
տին անուն շողեսաւով, զոր կայսերական կառավա-
րութիւնը Նորին Բարձրութեան հրամանացը ներքե-
ղած էր։ Սոմանեան նահանգին երէն անցնելու ժա-
մանակը՝ Կարոլոս իշխանը իւր բարձր աստիճանին
արժանաւոր յարգանք ընդունուեցաւ քաղաքական
և զինուորական կառավարիչներէն։ Կ Պօլիս հաս-
նելուն, Ռուսական շորընարի իշխանը Կէօք-
Սոյի կայսերական Վեօշիւ իջաւ որ իրեն համար
պատրաստուած էր, և ուր ընդունուեցաւ գեսպանաց
ներկայացոյցիչ Վեօշիւ Պէյէն և Արիֆի Պէյէն,
որ կայսերական գիւղանին առաջին թարգմանն է։

Բարձրադասի Կարոլոս իշխանը իւր հասնելէն
անմիջապէս ետքը, հրամ. Պալլէի պալատը գնաց
ընկերութեամբ իւր պաշտօնատարաց։ Սոստափաւ
Սուլթանը բազում մարդասիրութեամբ ընդունեցաւ
զՆորին Բարձրութիւնը և հաճեցաւ ականատես
պատուական թուր մի շնորհէլու անոր։ Այս հան-
դիսաւոր ընդունելութեանը ներկայ էին բարձրա-
դասի Մեծ Եպիսկոպոսը և ուրիշ պաշտօնատարներ։

Կայսերական պալատէն ելլելով՝ Ռուսական իշխանը
տիրոջ իշխանը Բարձրագոյն Ռուսը գնաց, ուր բա-

կառավարիչ եւ սպարապետ Ստրպատական մա-
հանգի բարձրագոյն հաճութեամբ արքային։

Այժմանը տիր մեծարեկող իմ. սրբէս յայտ արարին
մեզ և անի յանդիման յայտնեցաւ բանիւ ի մտնին հար-
ցոյցման արքայական հարկատուութեանց Հայոց եղիւրդ
յԱրարտական երկրի մեծամեծ վրտար և շախաչանց
պահանջմանը. նա մանուկանց ի գնաւորն գործս և ի-
րաւութիւն համաշխարհական և անսովոր և արտաբոյ
կարգի և իրաւանց ծէսը և սովորութիւնը ծանրանում ի
վերայ նոյա. որովհետեւ այդպիսի անիրաւութիւնը և
անյարգար վարք գիտաւոր կառավարչաց ընդ ժողովր-
դոց ընդհիմ գտանին կամայն օգտաւորաւ արքային և
ընդհանուր անգործութիւն և խաղաղութիւն հասարա-
կաց ազգին համաձայն երեւին շնորհաց նորա, վասնոր ոյ
ըստ անգարձ բարձրագոյն հրամանի, արքայական տալիք
մեզ պատուէր հրամանի, Ա. վասն հարկահանութեան
հրամայեցիք հասարակարար ամենեւին մի զոյցէ պա-
տահեցի արտաբոյ ի կարգէ հաստատուող զիւտնի պա-
հանջեցին զհոգի ի նոյան, և որով շախաչ և կար-
գադրութեամբ վաւերացեալ և հաստատուող գտանին,
վարի և կառավարիչ գիտաւորութեամբ։ Ա. կողմաւ
ծառնորք և տանուտարք ամենեւին Համարձակեցին
պահանջիլ զգնաւորն իրաւ, որպէս զիպատ և զհակա-
յայլութն հանդերձ, չծանրաբեռնել զնոսա այն գունակ
ապօրինաւոր իրօք. ի վերայ այս ամենայնի պատուէր
հրամանի լիցի ամենեւորն կառավարչաց քաղաքական,
որ ըստ օրինի սրբէս ի վաղուց իսկ հետէ հաստատուող
զտանի, նոյնի եղանակաւ զիրաւուն հարկահանութեան
գիւղանի ի գործ դնել. նաւ կառավարաւոր նոյնի
կարգաւ և իրաւաւր վարկայն ընդ հասարակ երկրա-

ընդ նախարարները զուգարկած էին Վորին Բարձր թուրքերը շնորհաւորելու համար :

Մէկ երկու օր անցնելէ ետեւ Վարդու իշխանին հետգհեաէ այցելութեան դային բարձա . Տեաքը Մեծ Լաւարդոսը , արտաքին դործոյ պաշտօնեան , Մեծ ծովապետը . և տէրութեան ուրիշ գլխաւոր պաշտօնատարները . նմանապէս օտար տէրութեանց երեսփոխանները .

Վարդու իշխանին՝ Բարձրագոյն Գրան կողմանէ ճանչուելուն պայմանները հետեւեալներն են .

Յիշեալ իշխանը որպէս օրդի պիտի տիրէ Մոլա տօլալաքիայի վերայ ընդ վեհապետութեամբ օգոստոսիս Սուլթանին :

Սուլթանիայի զօրաբանակին թիւը՝ 30,000 հոգի էն աւելի պիտի չըլլայ :

Մոլալաքիայի իշխանութեանց առ Բարձրագոյն Գրան վճարած տարեկան հարկին գումարը պիտի աւելնայ և այս գումարը յետ այսորիկ պիտի որոշուի :

Մոլալաքիայի Միացեալ Էշխանութիւնը պիտի կրնայ գրամ կոխել , բայց անոր վերայ կայսերական թուրան պիտի ըլլայ :

Բարձրագոյն Վարդու իշխանը այս պայմանները ընդունեցաւ և խոստացաւ իւր վեհապետին , թէ անին հնարաւոր ջանք 'ի դործ պիտի դնէ , որպէսզի Մոլալաքիան և Վալաքիան բարձրութեան և անդորրութեան մէջ պահէ միշտ :

Օգոստոսիս Սուլթանը հաճեցաւ օսմանիւ կարգին և Մեծիտիւ կարգին շքանշաններով պատուել Վարդու իշխանին հետ եղող պաշտօնատարները՝ իւրաքանչիւրը իւր աստիճանին համեմատ : Այս պաշտօնատարաց թիւը 21 հոգիի կը հասնէր :

Սուլթանիայի բարձրագոյն իշխանը՝ ամսոյս 19 ին առաւօտուն Խզեաթին անուն շոգենաւով , մեկնեցաւ Վառնա վերադառնալու . ուսկից Պոլսէն պիտի երթայ : Օգոստոսիս կայսեր քանակի օգնական ճէմիլ փաշան և Մանուհ—Պէյը ուղեկից եղան Վորին Բարձրութեանը , որուն հետ մինչև Րուշնուք պիտի երթան :

Վիրիտէն հետգհեաէ հասած լուրերը կը ծանուանեն թէ ապստամբները վերջին յուսահատութեան մէջ կը գտնուին և օրըստօրէ անձնատուր ըլլալու վերայ են : Կայսերական զօրքը Վաֆէ ըստած գետին վերայ յարձակելով ուր թշնամին մեծ զօրութեամբ ապստանուել էր , աստիկ պատերազմ մի տեղի ունեցաւ . որուն մէջ օսմանեան ղեկավարները մեծ քաջութիւն ցուցուցին և զինի փառաւոր յաղ-

ղարծա խրեանց . և ամենին չլինելուն վրդովմունք և տեղադրութիւնք 'ի նոյնին զայս օրինակ . յամենայնի և ամենայնի ինքիցին կոտորարք ուղղիչք , անխուփ մտայնե ընդհանրապէս . առաւել քան զայս չիւ ինչ արժանի 'ի յուսելու : Յամենեան Րէճայ 1282 թուականին և կամ յամենան Նոյեմբերի 1865 ամի :

ԻՆՊԻՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Հինգերորդ . — Սուլթանի հրաման լիցի արքունական կնոջ լրբե հատաւորուն և հիմաւոր կանոն վասն Հայոց հայատակաց Ձերդ մեծութեան , զի որք 'ի պատճառս հայկոյնից զապրուստ կենաց և կոտորութեան խրեանց արաղկոտանան 'ի Ռուսաստան կամ՝ այլուր վասն մշակութեան , 'ի ժամ վերադարձման նոցա 'ի հոյրենիս խրեանց , սահմանադրէ և աստորք բռնի և անխնայ յախշտակին 'ի ձեռաց նոցա զմանաւոր 'ի ձեռն բերեալ զլրամական սպրուստ նոցա , զորս բազում տառապանք և քրտամբք վատակեալ են . կարգադրեցին զի բայց 'ի օրինօք նշանակեալ հարկացն մի՛ վեհաճար արասցին զնոսա և ձեռնուռնայն դարձուցին առ ընտանիս խրեանց , և իրբե օրինադանց ընդգէմ խղճի մասց համարելի այս գործք և արարք սահմանադրաց :

ՆՈՐԻՆ ՊՍՏԱՍԻԱՆ

Հրաման Սպասարաքի բարեկամութեամբ արքային առ Ազիզ խան Սարտարն Բօլլու :

Արժանապարզ իմ , որպէս երևցաւ և բոցերևակի յայտնեցաւ տէրութեան , ոմանք 'ի Հայոց ազգէն բնական յԱրապառական երկրի , վասն մշակութեան և զմանապէս վատակի չուեն 'ի կողմանս Ռուսաստանի . 'ի վերադարձման սրտաւ սահմանադրէ և ուղեկաւոր

թուրեան մի ապստամբները վտանգին նոյն գիրքէն : Այս կողմոյն մէջ՝ թշնամոյն կողմանէ 500 հոգի սպանուեցան , որոցմէ 150ը հեղինացի գինուորականք էին : Իսկ օսմանեան զօրաց ըրած կոտորութիւնը համեմատաբար , շատ քիչ է : Այս յաղթիւնը Հանեալի ժողովրդեան ծանուցանելու համար 21 թնդանթ արձակուեցաւ և հրապարակեան ուրախութիւններ եղան :

Քանի մը ուրիշ արկունահեղ կոիւներ ևս եղան , որոց մէջ օսմանեան զօրքը միշտ յաղթական հանդիսացան . վերջապէս Վիրիտի բնակիչները ընդհանուր տնիշաշարութիւն և հաշտութիւն կը խնդրեն կայսերական գործակալ Բ . Սուստաֆա փաշայէն :

ԱՅԳԵՆ

Անցեալները ծանուցինք թէ , Կ . Պօլսոյ Ռուսաց դեսպան վեհապետ իշխանութիւնք զօրապետը քաղած է Ծէլէ Աւարայի ամառատարին դէմ , անոր մէջ հրատարակուած քանի մը յօդուածոց համար՝ որոնք Ռուսաց կոտորութիւնը չարաչար կը պախարակէին : Այժմ Գ . Մարտիկան լրագրին մէջ կը կարգաւորէ թէ այս դատը Բարձրագոյն Գրան տեսնուելով՝ յիշեալ ամառատարը , որ Կ . Պօլսոյ կը հրատարակուի , դատապարտուել է 30 օսմանեան լիտ տուգանք վճարելու :

Գ . Մարտիկան հետ մեք ևս մեծապէս կը ցաւիմք այս դատապարտութեանը վերայ , և կը փափաքեմք որ ազգային լրագրները , կարելի եղածին չափ , խոհեմութիւնը ու չափաւորութիւնը ձեռքէ չզրկեն , այսպիսի մեղանքներ ազատ մնալու համար՝ որ խիստ ծանր է հայերէն սր և է թերթի մը համար :

— Կիւիլիոյ նոր կաթնովիկոս Վիկտորիոս եպիսկոպոսը , որ Կ . Պօլսոյ ազգային Վարչութիւնը իրաւամբ չուղելով ճանաչել անոր կաթնովիկոսութիւնը Կ . Պօլսոյ հրաւիրած էր զինքը Բարձրագոյն Գրան միջոցաւ , տակաւին իւր վիճակները կը պարտի , և զժաղդաբար ամեն աեղ սիրով և պատուով կը դուռնուի և կը մեծարուի :

Թէպէտեւ զրոյցուեցաւ թէ յիշեալ կաթնովիկոսը մօտեւ ճամբայ ելած է Պօլսոյ գալու , բայց ըստ երևմանց , իւր վիճակներէն դուրս ելելու միտք չունի : Կ . Պօլսոյ ազգային Վարչութիւնը իւր ձեռքէն եկածը ըրաւ . աւելց աւելի 'ի նշ կրնար ընել՝ իւր խօսքը յառաջ տանելու համար : Սուրբ ազգային լրագիրք ոմանք , որ միշտ կը դատապարտեն զպատրիարքարանը թէ բաւական գործունէութիւն չունի շատ խնդիրներու մէջ , պէտք է որ այս օրինա-

զանազան պատճառներ հարաւահարկն զնոսա և յափշտակին զինչ և զգրամն նոցա շահեալ . արդարեւ յերեւել սեղանի տնիքաւորութեանց և անխաղձ վարուց կոտորութեանց առ տնանի աղքատու ողորմելիս Հայոց , միանդամայն հեռի երկին յիշատանց և յարգարութեան . չէ՛ պիտի սահմանադրուց և ուղեկաւորայն ճանապարհի՛ գտանել ինքնաղբիւս և ազատ զօր ինչ կամիցին արտայն ճանապարհորդաց . 'ի վերայ այս ամենայնի վճիռ է արդարագոյն հրամանի՛ Վորին կայսերական Մեծութեան և թագաւորական կամաց , ճանձրութիւն տամ Ձերդ գերազանցութեան , որ յայտպիսի գործս զվերջին ճիգն աշխատութեան և քննութեան 'ի գործ գնել , օրիւրաւոր կարգադրութիւն հաստատուն հաստատեցին 'ի սահման , որով բնաւ երբեք վիճակի Հայոց նկրտութիւն վիշտ և տառապանք իմն չկարացնեն , և առաւել քան զվի դրամ կարգադրեալ և հաստատեալ հարկի չպտահանջեցին 'ի նոցանէ . և ուլ որ 'ի սահմանադրաց և ճանապարհակալաց զժրեացէ , և 'ի կարգէ հաստատութեան զիւսանակեանց և տնտեսաւորաց հեռաւոր և աւելի ինչ առնուց . 'ի ճանապարհորդացն Հայոց , արժանի է ձեզ պատեմել զնոսա և դարձուցանել զվրասն և տալ նոցա զպատուստ լիտաւոր զժրողացն օրինաց և բարեկարգութեան . և որով և ինչ եղանակաւ տնիքաւորութեան և հարստահարութիւնք բորձցին միանգամայն և պահպանեցին 'ի Հայոց . 'ի վերայ այս ամենայնի վերահասութիւնք և քննութիւնք անաչաւ գործադրեցին ձեօք . առաւել քան զայս չիւ ինչ 'ի ծանօթութիւն : Յամենան Րէճայ 1282 թու կամ 'ի Նոյեմբի 1865 ամի :

(Պիտի շարունակուի :

կէն հասնան թէ մինչև 'իւր կը հասնի անոր զօրութիւնը : Այս գործութիւնը՝ ըստ ամենայն մասանց շատ տկար է . զոր անտարբերութիւն կանաւանեն ոմանք . բայց այս կարծիքը սխալ կերեկի մեզ :

— Ազգային Մահապարտութեան վերաբնութիւնը , որուն օր յառաջ լրբեալու և 'ի գործ գրուելուն փափաքողները բազմաթիւ են , օր ըստ օրէ կերկարի և չիմըննար : Այս բանին համար հաստատուած Յանձնաժողովը ինչ կընէ . ինչո՞ւ համար իւր պաշտօնը շուտով չկատարեն միթէ օրինաւոր պատճառ մի կամ արգելք մի ունի՞ գործը այսչափ երկարացնելու : Մարդ մը չի տես . բայց ամենուն զիտցածը այս է , որ սահմանադրաւոր աղբայնոց մէջ դանդաղեցնել կը շատանայ այս ցաւալի յապաղութեանը համար : Ուստի ազգային Սառն ժողովը մօտեւս պարտաւորեցաւ որոշել , բանակցութիւն ընելու յիշեալ Յանձնաժողովոյն հետ և անոր ուշադրութիւնը հրաւիրել այս խնդրոյ վերայ : Տեսնենք թէ այս որոշումը երբ 'ի գործ պիտի դրուի և ինչ արդիւնք պիտի ունենայ :

Իստ մեր կարծեաց՝ ազգային Մահապարտութեան վերաբնութեան այսչափ երկար ժամանակ ուշանալը օրինաւոր պատճառ մի կամ գլխաւոր արդեւք մի պիտի ունենայ , որ անձանթ է հասարակութեան :

— Կըլտմէք թէ Կ . Պօլսոյ Սասեղեղի բնակիչներէն 'ի Նշանեան Սրբօհի մայրապետը՝ բարեպաշտական գովելի ողիւ շարժեալ , նոյն գեղին մէջ ըրբանոց մի հաստատուելու ձեռք զարկել է , որ անտէր և որք աղջիկները կը թելու և անոնց ապաւորեալ լաւ եղածին չափ բարեպետութեամբ հոգ պիտի տանի :

Յիշեալ օրբանոցին մէջ արդէն վեց որք աղջիկներ կը խնամուին և կը կրթուին եղբր Սրբօհի մայրապետին հոգատարութեամբ : Բայց այս մարդասիրական գործը ամուր հիմանց վերայ հաստատուելու համար , հոգեւէր մայրապետը գործադրութեամբ ազգասէր տիկնաց օգնութեանը դիմել է . և եթէ անոնցմէ իւրաքանչիւրը՝ իւր կարողութեանը համեմատ , դրամական նուէր մի շնորհելու ըլլայ , նոյն գումարով կալուածներ ծախու պիտի առնու , որպէսզի անոնց եկամուտովը տարեկան ծախուց դնէ մէկ մասը ապահովուի :

Աւելորդ կը համարեմք զրոյցելու թէ ամենայն քաջալերութեան և օգնութեան արժանի է այս Աստուածահաճոյ ձեռնարկութիւնը . մանաւանդ որ Սասեղեղի թագական խորհուրդը և ազգային կեդրոնական Վարչութիւնը կը վկայեն Սրբօհի մայրապետին հաւատարմիւ և վստահութեան արժանի անձ մի ըլլալը :

Արքունի վառօդարանաց տնտեսութիւնը և վերատեսչութիւնը՝ կայսերական հրովարտակալ վեհափայլ Տատեան Յօհաննէս—Պէյին յանձնուեցաւ դարձեալ :

Տատեան պայծառափայլ գերդաստանը դերթէ դարէ մը 'ի վեր արքունի վառօդապետութեան բարձր պաշտօնը 'ի գործ դրած է ամենայն հաւատարմութեւ և մեծ յաջողութեամբ : Վոյն ազնուազարմ գերդաստանին դուրս վեհափայլ Յօհաննէս—Պէյը՝ իւր բնական հանձարով և գործունէութեամբ արքունի վառօդաբանները այնպիսի յառաջադիմութեան և բարեկարգութեան մէջ դրած էր , որ յիշեալ գործարաններէն ելած վառօդը՝ Անդղիոյ վառօդէն աւելի զօրաւոր և աւելի լաւ ըլլալէ ետեւ , զինն ալ անորմէ շատ աժան էր :

Բարձրագոյն Գրան Տատեան Յօհաննէս—Պէյին այս պատուական յատկութիւնները և անոր բազմամայ հաւատարմիւ և արդիւնաւոր ծառայութիւնները իւր աչաց առջև ունենալով , մարդասիրաբար հաճեցաւ արքունի վառօդապետութեան բարձր պաշտօնը դարձեալ Վորին Վեհապետին յանձնել :

Հայոց ազգը , որ Տատեան մեծաշուք գերդաստանին ազգասիրական բարեբարութիւնները և բարեպաշտ զգացմունքը կը ճանաչէ և կը յարգէ միշտ , երախտագէտ սրտիւ և մեծ գոհունակութեամբ իմացաւ կայսերական այս պաշտօնաբաշխութիւնը և շնորհ . և այս բարեպատեհ առթիւ կը փութայ իւր անկեղծ խնդակցութիւնը յայտնելու յիշեալ վեհափայլ Պէյին , երբեւ տկար ապացոյց մի շնորհակալութեան՝ Տատեան գերդաստանէն մինչև ցայսօր առ աղոյն եղած զանազան բարեբարութեանց :

